ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2019 թվականի N: 554-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՅԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՍՎԵՏԼԱՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 45-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անդամ Սվետլանա Մխիթարյանի 2019 թվականի հոկտեմբերի 24-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամ՝ Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Սվետլանա Մխիթարյանի լիազորությունները՝ մինչև Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ավարտը:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է